Հ.ՍԻՄՈՆՅԱՆ, Է.ԶՈՀՐԱԲՅԱՆ, Վ.ԹՈՋԱԲԵԿՅԱՆ, Ա.ԱՎԱԳՅԱՆ, Հ.ԿԱՐԱԳԵՈՉՅԱՆ, Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրում (գիտաժողովի նյութեր), Ե., 2001, «Նախիջևան» հրատ., 200 էջ:

Խորհրդային Միության լուծարումը բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրների առաջ կանգնեցրեց և Հայաստանի Հանրապետությանը, և ամբողջ հայ ժողովրդին: Շատ ընագավառներում պարզվեց, որ «թագավորը մերկ է», այդ թվում նաև պատմագիտության նորագույն շրջանի և Հայկական հարցի տարբեր ոլորտների ուսումնասիրություններում:

Կոնկրետ դեպքում նկատի ունենք Նախիջևանի պատմության, իրավաքաղաքական կարգավիճակի ու քաղաքական աշխարհագրության լուսաբանության առկա վիճակը: Խորհրդահայ պատմաքաղաքական միտքը, կարծես, հաշտվել էր հիմնախնդրի խորհրդային-ադրբեջանական հայեցակարգի հետ: Բանը հասել էր նրան, որ անտեսելով Մոսկվայի (և Կարսի) դաշնագրում հստակ սահմանված Նախիջևանի՝ որպես խնամակալության (պրոտեկտորատ) կարգավիճակը, այն ընկալվում էր որպես Ադրբեջանական ԽՍՀ անբաժան մասը: Այդ միտումը դեռևս պահպանում է իր իներցիայի ուժը[1]:

Ճիշտ է, տարբեր ժամանակներում ստեղծվել էին արժեքավոր մենագրություններ, ինչպես՝ Ռ.Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» (մաս 2, Մ. - Լ., 1929, ռուսերեն), Շ.Թորոսյանի «Հայկական հարցը և միջազգային օրենքը» (Բեյրութ, 1976, անգլ. բարեփոխված հրատ.՝ Բեյրութ, 1988) մեծարժեք գործերը, սակայն արվածը բավարար չէր, իսկ հիշատակված հեղինակները հիմնականում կամ մոռացված էին (Ռ.Բորյան) կամ անհայտ՝ խորհրդահայ մտավորականին[*]:

Ստեղծված վիճակը հաղթահարելու և հայագիտության ոլորտում մի հիմնարար ու ինքնուրույն ուղղություն ձևավորելու առումով ոգեշնչելի է «Նախիջևան» հայրենակցական միության ջանքերով ստեղծված ժողովածուն՝ «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» (այսուհետև՝ Նախիջևանի հիմնահարցը)՝ փաստաթղթերի արժեքավոր «հավելվածով» հանդերձ: Ընդ որում, փաստաթղթերի մի մասը առաջին անգամ է ներկայացվում ընթերցողին:

Հեղինակային կոլեկտիվը (կազմող՝ Ռ.Համբարձումյան), փորձել է հնարավորինս ամբողջությամբ ընդգրկել հիմնահարցի տարբեր կողմերը՝ պատմություն ու պատմագիտական կարևոր փաստերի ճշգրտումներ, Նախիջևանի բնիկ ժողովրդի արտաքսման քաղաքականության համաթուրքական ենթաշերտի բացահայտում, դրան զուգահեռ՝ հայ կոմունիստների կողմից Հայաստանի ազգային տարածքի տրամադրում Կովկասի թաթարներին ու նրանց «ներգաղթի» կազմակերպում,

---

[1] *Տե՛ս Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 3, Ե., 1999, էջ 840 - 842:*

[*] *Վերջին տարիներին Նախիջևանյան թեմատիկային են նվիրվել հետևյալ հետազոտությունները՝ Л.К.Ширинян, Нахичеван-перекресток геополитических интересов (Голос Армении, 24, VI. 1995); А.С.Манасян, Кому же принадлежит Нахичеван де-юре (Голос Армении, 17. VII, 1996).*

Թուրքիայի հովանավորչություն էթնոգենեզ ապրող ադրբեջանցիներին, ռուս-թուրքական այլանսի կողմից Նախիջևանի օտարում Հոգուտ Ադրբեջանի, Նախիջևանում հայ ժողովրդի՝ հազարամյակների մշակութային շարունակական ներկայության նորանոր ապացույցներ, Ղարսկաստանի նախիջևանյան (1918 - 1920թթ.) քաղաքականության նորահայտ էջեր և այլն: Ժողովածուին, անշուշտ, առանձին արժեք են հաղորդում այնտեղ զետեղված քարտեզները, որոնք, ցավոք, գունավոր չլինելու պատճառով դժվար ընկալելի են:

Այսպիսով, քննարկված հարցերի թվարկումն անգամ ցուցադրում է կատարված աշխատանքի հույժ օգտակարությունն ու շեշտում այն շարունակական դարձնելու անհրաժեշտությունը: Չէ որ Նախիջևանի հիմնախնդիրը, գիտապատմական, մշակութային կարևորությամբ հանդերձ, Հայկական հարցի մի էական մասն է, ՀՀ ռազմավարական նշանակության կշեռքի ծանրագույն կշռաքարերից մեկը: Նախիջևանն իր ռազմավարական դիրքով և միջազգային իրավաքաղաքական կարգավիճակով ուղեկցելու է, անկախ ենթակայական նախասիրություններից, Հայոց շարունակական երթին՝ պատմական հեռանկարի տեսանկյունից:

Ուստի և, ընդգծելով, որ կատարվածն իր արդյունքներով արդեն մեր սեփականությունն է, արծարծված խնդիրների վերաբերյալ արտահայտենք որոշակի նկատառումներ, որից, ինչպես մեզ է թվում, միայն կշահի ընդհանուր գործը:

Եվ այսպես, 1921թ. ռուս-թուրքական «բարեկամության ու եղբայրության» ակտը իր բոլոր ելևէջներով հնարավոր չէ պատկերացնել ու ըմբռնել, առավել ևս ենթարկել գիտաքաղաքական վերլուծության, առանց բոլշևիզմի երկրառազմավարության (գեոստրատեգիա) իմացության, առանց պատկերացնելու, ինչպես կասեր Ն.Ադոնցը, ժամանակաշրջանի «տերիտորիալ իրադրությունը»: Իսկ բոլշևիզմի երկրառազմավարությունը ողջ ցինիզմով հանդերձ, իր բովանդակային ու առարկայական արտացոլումն էր գտել ժողկոմխորհի «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» հայտնի դիմումում (20.XI/3.XII. 1917): Այնտեղ ասված է. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման ու նրանից Հայաստանի խլման պայմանագիրը պատառոտված է ու ոչնչացված [ընդգծումներն իմն են - Լ.Շ.]»[2]: Ասված է պարզ, աներկիմաստ, հստակ ու սառնասիրտ: Այս դոկտրինան, անշուշտ, ուներ և իր ռեգիոնալ (տարածաշրջանային)՝ Հայաստանյան վեկտորը: Առավել պարզությամբ, Ռուսաստանի ազգային շահերի գիտակցումով, այն բանաձևվել է Չիչերինի կողմից (ուշադիր եղեք տարեթվին՝ 5 դեկտեմբերի 1920թ., երբ Հայաստանի ճակատագիրը թուրքերի հետ արդեն կանխորոշել էին). «Կովկասում Թուրքիայի քաղաքականության զավթողականի վերածվելու դեպքում Հայաստանը դրա դեմ պատնեշ կհանդիսանա և կպաշտպանի ՄԵԶ (ընդգծումներն իմն են - Լ.Շ.)»[3]: Նյութական այս իրադրությունն էր, որ լավ էր հասկացել առաջին Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը, երբ դերմարդկային ճիգերով փորձում էր համախմբել ցեղասպանության արհավիրքները վերապրող ժողովրդի սահմանափակ ուժերը՝ առաջնորդելով փետրվարյան ապստամբությունը, կազմակերպելով Զանգեզուրի հերոսամարտը՝ դուրս պրծնելու համար քեմալա-բոլշևիկյան գրկախառնությունից: Սակայն նյութական նույն իրադրությունն էր, որ ռազմավարական իմաստով, «Հայանպաստ» ոսկե միջինը գտնելու ոչ մի հնարավորություն չէր թողնում: Պատահական չէ, որ այդ քաղաքականությունը

[2] Документы внешней политики СССР, т. 3, М., 1957, с. 35.

[3] Նախիջևանի հիմնահարցը, էջ 49:

շարունակվեց ընդհուպ գորբաչովյան տխրահռչակ «Օղակ» գործողությունը:

Նկատենք, որ «լենին-ստալինյան» դիմումն ուներ իր գաղափարաքաղաքական ակունքներն ու նախադրյալները: Դեռևս 1912թ. սեպտեմբերին իտալա-թուրքական պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության ափրիկյան տիրապետությունները Վ.Լենինի կողմից հռչակվեցին «թուրքական հողեր»: Նա իր թրքամետ կողմնորոշումը չփոխեց մինչև գերեզման[4]:

Շարադրվածի համատեքստում տարօրինակ է պատմական իրողությունը մինչև վերջ ասելուց խուսափելու միտումը: Նկատի ունենք ժողովածուում Նարիմանովի՝ 1921թ. փետրվարին Լենինին գրած ինչ-որ երկու սպառնալից նամակների վկայակոչումը, որոնք և իբրև թե «կարևոր նշանակություն ունեցան» Նախիջևանի հակասապիրը կանխորոշելու գործում[5]:

Իսկապես, տարօրինակ է, չէ՞. բոլշևիկյան մի նոմենկլատուրշչիկի սպառնալիքները Լենինի վրա ազդեցին, իսկ հաղթական փետրվարյան ապստամբությունը Հայաստանում ոչ: Ի դեպ, սա կարծես թե հայ մտավոր շրջանակներում ծածկագրված մի դիրքորոշում է՝ Առաջին հանրապետության շրջանի և նրա շուրջ պատմական գործընթացների մեկնաբանության ընթացքում որոնել ու անընդհատ գտնել համապատասխան նամակներ ու ռադիոդրեր՝ շատ հաճախ հեռու «նյութական իրադրության» ռազմավարական ընկալման շրջանակներից ու ընդհանուր ռազմավարության տրամաբանությունից:

Հաջորդ նկատառումը վերաբերում է թուրք-պարսկական սահմանավեճի կարգավորմանը կոչված 1932թ. համաձայնագրի իրական բովանդակությունը շոշափող հարցերին: Հոսքը Փոքր Մասիսի մերձակա շրջանում «Մի ոչ մեծ տարածքի»՝ Կոտուր-Զաղրոշի սահմանային գոտում գրեթե նույն մեծությամբ հողաշերտի հետ փոխանակության գնահատման մասին է: Նախ, նշենք, որ տվյալ փոխանակությունը տեղի չի ունեցել Թուրքիայի խնդրանքով, ինչպես ներկայացվում է ժողովածուում[6], այլ համաձայնությունը արդյունք էր 1927թ. հոկտեմբերի՝ թուրքական վերջնագրի[7]: Այնուհետև, երկրաբաղաքականության տեսանկյունից «մի ոչ մեծ տարածքը» կամ «հողաշերտը» կարող է ունենալ հսկայական ռազմավարական նշանակություն (վերցնենք Ջիբրալթարի օրինակը): Քրդական խնդրի և տվյալ համաձայնության առիթով Սիմոն Վրացյանը արձանագրում է. «Բացի քրդական վտանգից, Թուրքիայի համար կա և մի ուրիշ կարևոր նկատում. Պարսկաստանի հետ ունեցած նրա սահմանների հյուսիսային մասերը բռնում են ռազմագիտական այն կետերը, հաղորդակցության այն ուղիները, որոնք ուղիղ գծով, թուրք մահմեդական գանգվածների միջով, պարսից և ռուսական Աղրբեջանների վրայով, տանում են դեպի Կասպից ծով ու Անդրկասպյան երկրները»[8]: Եվ առհասարակ. «Թե՛ նախկին համաիսլամական և թե ներկա համաթուրքական Թուրքիայի համար պարսկական սահմանագլխի ռազմական որոշ կետերի տիրապետությունը համարվում էր բացարձակ առաջնակարգ կարևորություն ունեցող մի հարց»[9]: Ըստ էության, նույն

[4] Հանդամանորեն տե՛ս Л. Л. Улунян, Коминтерн и геополитика (Балканский рубеж, 1919 – 1938, М., 1997, с. 27 - 37):

[5] Նախիջևանի հիմնահարցը, էջ 9:

[6] Նույն տեղում, էջ 83:

[7] Տե՛ս С. Иранский, Турецко-персидское соглашение (Заря Востока, 10. III. 1929).

[8] Ս.Վրացյան, Թուրք-պարսկական սահմանավեճը (Դրոշակ, 1929, N 6-7, էջ 126):

[9] Նույն տեղում:

տեսակետը, սակայն որոշ քողարկումով, ընդունում է նաև Արևելքի կնճռոտ խնդիրներին քաջածանոթ Ս.Իրանսկին, երբ գրում է. «Թուրքիան վարում էր համաթուրքական և խալիֆային քաղաքականություն (ընդգծումն իմն է - Լ.Շ.)»[10]:

Թերևս, որոշ վերապահումով, տվյալ համաձայնությունը և հողաշերտի փոխանակությունը XXդ. 20 - 30-ական թվականների գլոբալ քաղաքականության տեսակետից «ոչ մի նշանակություն չուներ Ռուսաստանի համար», ինչպես եզրակացվում է ժողովածուում[11], սակայն այլ է իրողությունը այսօր Հայաստանի, Իրանի և նույն Ռուսաստանի անվտանգության ու ազգային շահերի տեսակետից: Սրա մասին, մեր կարծիքով, պետք է. որ ասվեր ժողովածուում:

Այդուհանդերձ, արտահայտված նկատառումները, ամենևին էլ չեն նսեմացնում կատարված դործի շահեկանությունն ու գիտաքաղաքական նշանակությունը:

Լ.Ղ.ՇԻՐԻՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

---

[9] Նույն տեղում:

[10] С.Иранский, նշվ. հոդվ.:

[11] Տե՛ս Նախիջևանի հիմնահարցը, էջ 83: